ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Գ. ՍՎԱՋԼՅԱՆ

Ասպարեզ իջնելով XIX դ. 60—70-ական թվականների ազգային-ազատագրական զարթոնքի դարաշրջանում՝ Ս. Հայկունին իր ամբողջ գործունեությամբ արձագանքել է հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած իրադարձություններին, սկսած Զեյթունի ապստամբությունից մինչև սուլթան Համիդյան արյունոտ նախճիրը։

Քաղաքական ճնշումն ու տնտեսական շահագործումը մի կողմից, ազգային արժանապատվության ոտնահարումը մյուս կողմից, ուժասպառում էին արևմտահայությանը։ Բնաջնջվում էր բազմադարյան հարուստ մշակույթ ունեցող հայ ժողովուրդը, ոչնչանում էին նրա ստեղծած նյութական արժեքները, կորչում, անհետանում էր նրա մայրենի լեզուն։

Հասարակական-քաղաքական այս իրադարձությունները հրապարակ հանեցին մարդկանց, որոնք ամբողջ ուժով ու եռանդով նվիրվեցին հայկական հարցը յուրովի լուծելու խնդրին։ Հանդես եկավ Գարեգին Սրվանձտյանցն իր համազգային կոչով, ըստ որի «Օտարեն պետք չէ բան հուսալ. անհրաժեշտ է ամբողջ աշխարհին ցույց տալ, թե մենք ալ ազգ մի ենք, մեր պատմության և հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցանել, դարուս լուսավորության զենքերով սպառազինվիլ, գիտությամբ զորանալ, միությամբ դիմանալ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրաստել մայրեր, հասցնել հայրեր, զրկել զիրենք և տալ այս նպատակին։ Այս է մեր միակ փրկության ճամփան»[1]։

Այդ նույն գաղափարներով էր տոգորված նաև իր ժամանակի հայտնի բանահավաք, ազգագրագետ, հասարակական գործիչ, մանկավարժ Սարգիս Հայկունին։ Հայ ժողովրդի ֆիզիկական գոյության նկատմամբ Ս. Հայկունու մտահոգվածությունը սերտորեն աղերսվում էր այդ նույն բազմաչարչար, բայց տաղանդավոր ժողովրդի հոգևոր գանձերը պահպանելու և անմահացնելու ձգտման հետ։

Ս. Հայկունին (Սարգիս Ղազարյան) ծնվել է Տրապիզոնի Զեֆանոս գյուղում, 1838 թ.։ Նա առաջիններից էր, որ ավարտելով Տրապիզոնի «Խորենյան ընթերցասրահի» անսիստեմ դասընթացը և պակասն ինքնակրթությամբ լրացնելով, մեկնեց մոտակա Շանա թրքախոս հայ գյուղը՝ լուսավորություն տարածելու։ Նույն այդ տարիներին իր գործունեությունն է սկսում ծավալել Վարազդատյան ընկերությունը, որի կազմակերպիչ Մկրտիչ Փորթուգալյանը 1875 թ. հատուկ նամակով խնդրում է Հայկունուն մի շարք հայաշատ վայրերում, այդ թվում նաև Տրապիզոնում ստեղծել հիշյալ ընկերության մասնաճյուղերը։ Հայկունին մեկնում է Կ. Պոլիս, ծանոթանում Մ. Փորթուգալյանի և այլ մտավորականների հետ և գործունեության ծրագիր մշակելով վերադառնում Տրապիզոն, որտեղ հիմնադրում է նոր ուսումնարան և գրադարան։

1870-ական թթ. հայ գյուղացիության ծանր վիճակի, թուրք փաշաների անմարդկային բռնությունների մասին Հայկունին անստորագիր բազմաթիվ հոդվածներ է հրատարակում Կ. Պոլսի «Արարատ» պարբերականում, որոնց համար և դատապարտվում է բանտարկության։ Հասարակական կյանքի ու

---

1 Փորձ, Կ. Պոլիս, 1879, № 4, էջ 165։

ժողովրդական առօրյայի մասին գրված այդ լրագրային, հակիրճ հոդվածներն աստիճանաբար իրենց տեղը զիջում են ավելի ծավալուն ուսումնասիրությունների, որոնց բուն էությունը ժողովրդական կյանքն էր իր բազմազան ոլորտներով։ Հայկունու արխիվում (Ֆրանսիայից հայրենիք է հասցրել բանահավաք Արազ Կարապետյանը) պահպանվում են նրա ծննդավայր Տրապիզոնի մասին հավանաբար ծավալուն ուսումնասիրության միայն պատառիկները, որոնք հիմնականում վերաբերում են տեղի ճարտարապետական կոթողների արտաքին ու ներքին նկարագրությանը, ժողովրդական սովորույթներին, տոներին ու բարբառային յուրահատկություններին։

Տրապիզոնի և նրա շրջակա գյուղերի մասին մանրամասն ու բազմակողմանի պատկերացում է տալիս 1905 թ. էջմիածնում լույս տեսած «Հուսեփցի ազգատոհմը և տարօրինակ ավազակ Աբրիեոմ Տրապիզոնի հայ գյուղերու մեջ 1795—1840 թթ.» գրքույկը, որտեղ հեղինակը նկարագրում է դեռևս XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին բռնի հավատափոխ դարձած հայերի տընտեսական ու հոգևոր ստրկական վիճակը։ Որպես իր ժամանակի առաջավոր մտածող, Հայկունին կարողացել է ճիշտ մեկնաբանել «ավազակ» Աբրիեոմի տարօրինակ կերպարը, ժողովրդական մի հերոս, որը հասարակական-քաղաքական վերոհիշյալ պայմաններում զենքը ձեռքին ձգտում է նվաճել յուրայինների անկախությունն ու ազատությունը։

Ս. Հայկունու նկարագրած այդ «տարօրինակ ավազակը» քաջ է ու խիզախ, արդարամիտ ու անաչառ։ Նրա բոլոր արարքները բխում են ժողովրդասիրությունից և ուղղված են օտար հարստահարիչների դեմ։ Նա մենամենակ պայքարում է սուլթանական կառավարության ուղարկած զինված ջոկատների ու ենիչերիների դեմ և միշտ պարտության մատնում նրանց։ Սակայն ի վերջո սուլթանական կառավարությունը հետապնդում է Աբրիեոմին և դարանակալելով սպանում լեռնախորշերում ապաստանած ժողովրդական հերոսին։ Աբրիեոմը, լինելով մեր ֆիգայիների նախակարապետներից, իր մեջ խտացնում է բազմաչարչար հայ ժողովրդի ընդվզող ու ազատատենչ ոգին։

Տրապիզոնի շրջակայքում մոլեռանդ ենիչերիների ու մոլլաների կողմից բռնի թուրքացված սևգետացիների ողբերգական վիճակի նկարագրությունն ենք գտնում նաև Ս. Հայկունու «Նշխարներ կորած մոռացված հայեր. Տրապիզոնի հայ մահմեդական գյուղերն ու նրանց ավանդությունները» գրվածքում, որտեղ սևգետացի տեր Կարապետ քահանան ևս իրական դեմք է։ Տեր Կարապետի նախահայրերը հինգ-վեց սերունդ շարունակաբար նույն տեր Կարապետ անունով քահանա են ձեռնադրվել, որպեսզի գաղտնի Սևգետ գնան և քրիստոնեական հավատը վառ պահեն բռնի թուրքացված հայերի մեջ։ «Ժողովուրդը,— գրում է Ս. Հայկունին,— ամեն օր պարտավորյալ էր մզկիթ գնալ, աղոթել՝ հայտնապես, իսկ տարին մեկ անգամ իր սիրած կրոնի պաշտամունքը կատարել՝ գաղտնի»[2]։

Ս. Հայկունին մեջբերում է նաև սևգետացիների պատմած մի ավանդությունը, թե ինչպես Մուհամեդի հրամանով Սև գետը կարմիր է դառնում և, իբր այդ հրաշքը տեսնելով է, որ հայերը հավատափոխ են եղել։ Սակայն Ս. Հայկունին, որպես իր ժամանակի գիտակից ու հայրենասեր անձնավորություն, հանգամանորեն վերլուծելով այդ ավանդության հասարակական-քաղաքական արմատները, հետևյալ եզրակացությանն է հանգում։ «Այո՜,— գրում է նա,— Սև գետը արյուն դարձավ, այդ ևս կվկայեն այսօր այն հայ քրիստոնյա մնացած հայերը... յոթ օր, յոթ գիշեր արյուն կհոսեր, դա ուրիշ բան չէր, այլ եթե իրենց սիրելի ազգակիցներու արյունը, որ կատաղի բարբարոսությունը կհեղուր, որ հոսելով խառնվեցավ Սև գետի ալիքներուն, Սև

2 Արարատ, Վաղարշապատ, 1895, էջ 239։

գետը կիսով չափ սև արյունով թանձրացավ՝ մեծ ու փոքր հայոց դիակները, կպատմեն, ջրի ընթացքը կասեցուցած էին»[3]։

Ինչպես տեսնում ենք, բռնությամբ, հրով ու սրով հավատափոխ էր արվել հայ ժողովրդի այդ հատվածը։

Ազգագրագետի վկայությամբ նմանօրինակ դաժան պայմաններ էին ստեղծվել նաև Համշենում, որտեղ հայոց լեզուն թուրք մոլլաների կողմից արգելված էր և «Հայերեն յոթ բառը մի հայհոյություն նկատելով սահմանված էր տուգանք՝ հինգ ոչխարի քանակով»[4]։ Հասարակական-քաղաքական հարկադրանքի այդ պայմաններում հայ ժողովուրդն, անկասկած, դատապարտված է եղել աստիճանաբար մոռացության ենթարկել իր մայրենի լեզուն, հավատքն ու սովորույթները։

Ա. Հայկունու գրվածքների տրապիզոնյան այս շարքը նշանակալից իրադարձություն էր հայ հասարակական մտքի զարգացման ասպարեզում, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ մինչ այդ հայ իրականության մեջ գրեթե ոչ ոք չէր անդրադարձել Տրապիզոնի ու նրա շրջակայքի ուսումնասիրությանը։ Հայկունին, որպես բարեխիղճ տեղագրագետ-ազգագրագետ, հանգամանորեն նկարագրել է այդ վայրերի աշխարհագրական միջավայրը, բնակչության նիստուկացը, սովորույթն ու ծեսերը, որոնք խաթարվում ու եղծվում էին սուլթանական Թուրքիայի արյունոտ քաղաքականության հետևանքով։

Այսպիսով, հասկանալի է դառնում, թե ինչու Ս. Հայկունին իր մանկավարժական գործունեության տրապիզոնյան շրջանում ազգագրական ու տեղագրական նյութերի հետ միասին հատուկ ուշադրությամբ նկարագրել է նաև քրիստոնյա ճնշված ազգերի քաղաքական-տնտեսական ու հոգևոր կեղեքումը։ 1878 թ. Ս. Հայկունին անձամբ ծանոթանում է հայ բանագիտության երախտավոր Գարեգին Սրվանձտյանցին, որը շրջագայության էր դուրս եկել՝ վերահասու լինելու արևմտահայության տնտեսական ու կրթական վիճակին։ Սրվանձտյանցն այցելում է նաև Հայկունու դպրոցը, մոտիկից ծանոթանում նրա կատարած աշխատանքներին, իր գոհունակությունը հայտնում և խորհուրդ տալիս, որ ժողովրդական ուսուցիչը հիմնավորապես զբաղվի ժողովրդի կենցաղի, բառ ու բանի անաղարտ գրանցումով։

Այնուհետև Ս. Հայկունու կյանքում սկսվում է գործունեության մի նոր շրջան, որը համընկնում է ռուս-թուրքական (1877—1878 թթ.) պատերազմին և այդ իրադարձությունների հետ կապված ազգային-ազատագրական տրամադրություններին։ Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում հայաշատ մի շարք վայրերում ստեղծվում են ազգապահպան ընկերություններ։ 1879 թ. Կ. Պոլսում հիմնադրվում է Դպրոցասիրաց ընկերությունը, որը նպատակ ուներ Հայաստանի մի շարք վայրերում, այդ թվում նաև Ալաշկերտում, դպրոցներ հիմնադրել։ Այդ ընկերության հանձնարարությամբ Ս. Հայկունին ավագ ուսուցչի պաշտոնով առաքվում է Ալաշկերտ։ Այնտեղ ևս նա նվիրվում է պատերազմից տուժածների համար կազմակերպված Սովելոց հանձնաժողովի աշխատանքներին։ Ընտանիք առ ընտանիք շրջելով՝ սնունդ, վառելիք, դեղորայք ու հագուստեղեն է բաժանում կարիքավորներին, սփոփում ու մխիթարում ունեզրկված գաղթականներին և միաժամանակ, որպես ականատես, բազմաթիվ թղթակցություններ է գրում Կ. Պոլսի պարբերականներին՝ մանրամասն նկարագրելով ժողովրդի ողբերգական վիճակը։ «Ընթերցող հայ հոգիք,— գրում է նա,— մարդասեր անձեր, պահ մը ինձ հետ Ալաշկերտի դաշտը իջեք, այս տուներուն առջև կեցողներուն հանդիսատես եղեք, ասոնք անոնք են, որ իրենց սիրելիքը Թուրքերուն անգութ ճիրանաց, իրենց սիրելիքը արյունարբու սրոց զոհ տալեն հետո, հուսահատ ի Ռուսիա գաղթեցին, որպես թե իրենց ազատիչին գիրկն, որ մխիթարություն գտնեն, իրենց հույսն

3 Նույն տեղում, էջ 243։

4 Նույն տեղում, էջ 297։

ի դերև ելավ, վասն որո հուսահատ ետ դարձան իրենց սպաննիչներեն և կեղեքիչներեն աղաչելու, որ յուրյանց տանց մեջ իրրև հյուր ընդունվին շատ անգամ այս ալ կզլացվի վասն որո շատ մը ընտանիքներ, ամեն ինչ կորուսած մերկ ու բոբիկ իրենց տանց առջև սայլերու վրա կպառկին օրերով, որ իրենց տուներուն վրա բռնացողներուն գութը շարժեն»[5]։

Ահա այդպիսին էր գաղթականների վիճակը, իսկ ովքեր ավելի տանելի պայմաններում էին գտնվում, այսինքն լավագույն դեպքում, ունեին տուն և օջախ, ապա անընդհատ ենթարկվում էին թուրք կառավարության հարբսահարություններին. «Ճանապարհներու վրա եղող գյուղորեից շատերն ամեն օր տարապարհակ կվարվեին, իրենց ձիերով և սայլերով անցուդարձ անող գրեթե ամեն անձեր կիջնան հայու տուն, կուտեն, կխմեն իրենց ձիերուն հետ, առանց ստակ մը վճարելու կմեկնին։ Եթե այդ հայը չունիմ ըսե, այն միջոցին գավազանի կամ խարազանի հարվածներ իրեն բաժինն է։ Դեզ վառելն ամենօրյա սովորություն է, ամեն գիշեր դաշտիս մեջերն բոցեր կտեսնվին, գիշեր կրլլա, որ 40—50 կամ 100 ոսկի արժողությամբ դեզեր կվառվին, կովեր կամ ոչխարներ կտարվին»[6]։

Այնուհետև Ս. Հայկունին նկարագրում է ալաշկերտցի գաղթականների սովալլուկ վիճակը. «... Տեսա Ամատ գյուղը, մի ընտանիք. հայր, մայր սովից մեռած։ 7 թե 10 տարվա փթած ցորենը շաղել ու հաց էին թխել, որ հոտին մարդ չէր կարող տոկալ, երկու մեծ աղշիկները գունաթափ հյուծված թունաբան վրան նստած կիսամերկ, ամոթու՝ ձեռներով իրենց մերկությունը կծածկեին»[7]։

Եվ կամ Զետկան գյուղի գաղթականները, որոնք հազիվ «գարի հացով կապրեին», երբ գյուղում հայտնվում է Մստաֆա բեկը՝ 30 տնավեր չերքեզների հետ, գյուղացիներն «առ ահի իրենց զավակաց պարեն կտրելով այգ անգութներուն որկորը լցրին»[8]։

Բացի ավարից ու ավերից, անասելի չափերի էր հասնում նաև մարդասպանությունը, առևանգումն ու խոշտանգումը։ Հայերը ճարահատյալ բողոքում էին կառավարությանը, սակայն ոստիկանները փոխանակ հայերին պաշտպանելու, խրախուսում էին բեկերին։ «Կուզե մարդասպան ըլլա՝ ազատ կթողուն, ընդհակառակը, կգանակոծեն զհայերն, ի պատիժ իբր ի Ռուսիա գաղթելուն»[9]։

«Դեռ այսքանը քիչ էր ալաշկերտցիների համար, Կարսի նահանգեն 1000 տան չափ տաճիկ գաղթականներ տարածված են դաշտիս շրջակա գյուղերն ու բլուրներու մեջ, որը վրանաբնակ, որն ալ տուներու մեջ զետեղված։ Հայ գաղթականն արդեն ոչինչ չունի, իր դրացիեն կամ ազգականեն մուրալով պիտի ապրի»[10], իր գոյությունը մի կերպ պիտի պաշտպանի՝ բաժին հանելով նաև թուրք հափշտակիչներին, որոնք կառավարության կողմից ուղարկված էին հայերի հողերը, տները և գույքը զավթելու։ Թուրք վերաբնակիչներից բացի հայերին կեղեքում էին նաև կառավարական հարկահավաքները, որոնք Ռուսաստան գաղթած ու վերադարձած հայ «անհավատարիմներից» պահանջում էին հին ու նոր ամեն տեսակի հարկերը, դաժանորեն խոշտանգում ու չարչարում էին առանց այն էլ սովի մատնված գյուղացիներին։

Ս. Հայկունին, չկարողանալով վերջակետ դնել իր սրտաճմլիկ նկարագրին, ավելացնում է. «Ալ ինչե՞ր կա, որ խեղճ ժողովուրդն առ ահի կլռե,

---

5 Մասիս, Կ. Պոլիս, 1879, № 2479։

6 Նույն տեղում, № 2481։

7 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ս. Հայկունու ֆոնդ, վավ. № 107։

8 Տե՛ս Մասիս, 1879, № 2481։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում։

չկրնար համարձակիլ բողոքելու, որպեսզի ավելի թշնամիներ չվաստակի, վասընզի կտեսնե, որ շատ մը բողոքներ անգործադրելի մնացեր են և հետևանքն ավելի գեշ եղած է»[11]։

Ժողովրդի ցավերով տառապող Ս. Հայկունին Կ. Պոլսի պարբերականներին գրած իր հողվածներով բոլորին կոչ է անում օգնության ձեռք պարզել։ «Գթասիրտ հայեր,— գրում է նա,— խնդրեմ դարձուցեք աչքերնիդ Վաղարշակերտի վրա, տեսեք իր եղկելի վիճակը, ուր սոքա ձեռն ի ծնոտ կդեգերին իրենց ամենահարկավոր հացն կորոնեն, որպեսզի ձմեռն սովամահ չկորչին, որովհետև քաջ գիտցած են, որ առ ոտն է սովն, եթե գթասիրտ հայեր ձեռն չկարկառեն։ Երկու հարյուրե ավելի ընտանիք ամեն բանե զրկյալ իրենց հայրենիք դարձած են և նոցա չափ մ՚ալ գալու վրա են, հոս չէին, որ ցորյան ցանեին, ստակ չունեին, որ առնեն, ալ, ո՞վ ընթերցողք, դուք խորհեցեք, թե սոցա վիճակն ինչ պիտի լինի, վասն հայ եք՝ մարդ, գիտեք սովի սարսափելի երես»[12]։

Ս. Հայկունու լրագրային այդ սրտառուչ թղթակցությունները, որոնք սկիզբ դարձան նրա հետագա ազգագրական, վիճակագրական ու տեղագրական ծավալուն ուսումնասիրություններին, դրական ներգործություն էին ունենում ընթերցողների վրա։ Սովյալներին օգնություն կազմակերպող հանձնաժողովի միջոցով ամեն կողմից Ալաշկերտ էր ուղարկվում ցորեն և այլ սննդամթերք, փող ու դեղորայք, որոնք բոլորն էլ Ս. Հայկունին բարեխղճորեն բաժանում էր կարիքավորներին։ Նա շուրջ տասը տարի աշխատում է Ալաշկերտում։ Այնտեղ նա հիմնադրում է դպրոց և իր մանկավարժական գործունեությամբ աճեցնում ու դաստիարակում բազմաթիվ սաներ։ Նա ջանք չի խնայում նրանց լավագույն ձևով ուսուցանել մայրենի լեզու, հայ ժողովրդի պատմություն և աշխարհագրություն, իսկ երեկոները՝ անգրագետ մեծահասակներին ձրի գրաճանաչություն սովորեցնել։ Իր նյութական սուղ միջոցներով գնում է հայ գրողների՝ Բաֆֆու, Մկրտիչ Պեշիկթաշլյանի և այլոց գրքերը, դպրոցում ստեղծելով գրադարան-ընթերցասրահ։ Հմուտ մանկավարժը նպատակ ուներ ոչ միայն ֆիզիկապես կոփել մանուկներին, այլև նրանց ծանոթացնել հայրենի բնաշխարհին և այդ բնության գրկում իր տխուր կյանքով ապրող հայ ժողովրդի ծանր վիճակին։ Իր շրջագայությունների ընթացքում Հայկունին գրի է առնում ազգագրական ու բանահյուսական նյութեր։ Սակայն նրա գործելակերպի նման ուղղվածությունն անհասկանալի ու խորթ էր տեղի խավարամիտ հոգաբարձուներին, որոնք նրան, որպես քաղաքական անբարեհույսի, վտարում են ուսուցչի պաշտոնից։

Հայկունին Ալաշկերտում, ինչպես իր մանկավարժական գործունեության ընթացքում, նույնպես և գործազրկության տարիներին, շրջագայում է գյուղերն ու ավանները, մանրամասնորեն նկարագրում տեղավայրն ու միջավայրը, հնագիտական հուշարձաններն ու ժողովրդի տնտեսական գոյավիճակը, կենցաղն ու սովորությունները, խոսքն ու զրույցը։ Այդ տարիներին Հայկունին անհրաժեշտ նյութեր է հավաքում նաև իր «Բագրևանդ Ջրաբաշխ գավառ» (1894 թ.) ուսումնասիրության համար, որտեղ ցույց է տրված, թե ինչպես դաժան ու անմարդկային ձևերով բնաջնջվում էր հայ ժողովուրդը, նահատակվում էր ֆիզիկապես և բարոյապես, տընչանում էին նրա ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները։ Ամայացել էր հայրենի Բագրևանդը, հանգել էր հյուրասեր օջախների ծուխը։ Հուռթի դաշտերում այլևս չէին երևում գործունյա մշակները, չէր հնչում նրանց հորովելն ու գութանի երգը, ձմռան գիշերներին այլևս օդաներում չէին հավաքվում հին-հին զրույցներ պատմելու, այլևս չէր զրնգում հարսանյաց դհոլն ու զուռնան։ Ահա թե ինչու անհրաժեշտ էր անհապաղ գրիչը ձեռքն առնել և մանրամասն նկարագրել ժողովրդի անհետացող կենցաղն ու սովորությունները, արհեստներն ու զբաղմունքը, այն

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում։

ամենը, ինչ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել էր իր մեղվաջան եռանդով, հյուսել իր ինքնատիպ ու բազմակողմանի կյանքի հենքը։

Սակայն այդ բոլորն անհրաժեշտ էր դրի առնել ոչ միայն խպառ կորստից փրկելու, այլև իրեն՝ հայ ժողովրդին. ցույց տալու իր ուժն ու կարողությունը, ժողովրդական արժեքների վերհանումով ինքնագիտակցության բերելու ժողովրդական զանգվածներին և համայն աշխարհին ցույց տալու, որ հայը ևս տաղանդավոր ու ստեղծագործ մի ժողովուրդ է, որն ունեցել է իր անցյալի հարուստ մշակույթը, բայց պարտավորված է ապրել տխուր ներկայով, որ այդ ժողովուրդն արժանի է հարգանքի ու նրա դատը պետք է պաշտպանել։ Այդ առումով ժողովրդագրական բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Հայկունու «Գուլթան» ծավալուն մենագրությունը, որն անհետ կորել է՝ իր հետ տանելով նահապետական հայ գյուղի ամբողջ տարվա երկրագործական աշխատանքների նկարագրությունը։

Ս. Հայկունու ազգագրական նյութերի մեջ հատուկ տեղ է գրավում նաև «Սովորություն Ալաշկերտի հայ ժողովրդական հարսանյաց» ուսումնասիրությունը։ Այս անտիպ գրվածքում Ս. Հայկունին հարսանեկան սովորույթի շրջանակներից դուրս գալով, ընթերցողին համակողմանի պատկերացում է տալիս Ալաշկերտի հայության հասարակական-դասակարգային հարաբերությունների մասին։ Ս. Հայկունին գեղարվեստագետի վարպետությամբ պատկերել է հայ ժողովրդի ծիսակենցաղային սովորույթների ամբողջ համակարգը։

Ալաշկերտում Հայկունու գրի առած նյութերը բազմաթիվ են ու բազմազան, սակայն դրանց մեծ մասը մնացել է հողի տակ թաղված։ Քանի որ իր վաղամեռիկ կնոջ կորստից հետո, 1890 թ. ճողոպրելով թուրքական կառավարության հետապնդումներից, Ս. Հայկունին երկու անչափահաս զավակների հետ անցնում է ռուսական սահմանը, երկար դեգերումներից հետո ի վերջո ապաստանում Էջմիածնում՝ սկզբում դասավանդում ճեմարանում, այնուհետև՝ աշխատում որպես «Արարատ» ամսագրի սրբագրիչ։ Ժամանակի մտավորական, հրապարակագիր Նիկողայոս Քարամյանը այսպես է ներկայացրել վաստակաշատ ժողովրդագետին. «... Էջմիածնի պատկառելի պատերի տակով անցնելիս, Ներսիսյան հոյակապ լճի եզերքին շրջելիս կամ ավերակ ժառանգավորաց դպրոցի միջանցքով անցնելիս կհանդիպեք հաճախ մի անձի... վտիտ, կապույտ աչքերով և մեղմ հայացքով։ Շատ անգամ այդ անձին կտեսնեք երկու որբերի հետ, որոնց թևից բռնած նա մտամոլոր շրջում է։ Անտարբեր մի անցնեք նրա կողքից, այդ չքավորության կերպարանքի տակ մի հայ ուսուցիչ է անցնում ձեր քովից, կանգ առեք, խոսեցրեք նրան։ Նա շատ բաներ ունի ձեզ պատմելու, ո՜հ, շատ բաներ։ Հերիք չէ՞ միթե, եթե ձեզ ասեմ, որ այդ անձն այժմյան աղետալի Հայաստանի բոլոր կողմերը շրջել է, ամեն տեղ ապրել է և ճանաչում է յուր հայրենի երկրի թե՛ քարերն և թե՛ ժողովուրդը...»[13]։

Էջմիածնում այդ տարիներին Հայկունին հնաբավորություն է ունենում «Արարատ» ամսագրի էջերում և առանձին գրքույկներով լույս ընծայել տարբեր վայրերում գրառած տեղագրական ու ազգագրական զանազան նյութեր, ինչպես նաև իր հայտնաբերած «Մոքոս» ծավալուն վիպերգը (1896 թ.)։

1898 թ. Ս. Հայկունին նամակ է գրում Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսուչ Գր. Խալաթյանցին՝ կցելով իր անտիպ նյութերի ցուցակը։ Խալաթյանցին հիացմունք է պատճառում այդ «անգնահատելի գանձը» և խոստանում լույս ընծայել՝ Էմինյան կտակի միջոցներով, բայց չնչին վարձատրությամբ։ 1901 թ. Էջմիածնում, Գր. Խալաթյանցի հեռակա ղեկավարությամբ, լույս է տեսնում Էմինյան ազգագրական ժողովածուի երկրորդ հատորը, որն ընդգրկում է տարբեր գավառաբարբառներով բազմաթիվ հեքիաթներ ու «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի Մոկաց երկու տարբերակ։ Հատորի

---

13 Արձագանք, Թիֆլիս, 1895, № 89։

նյութերը կազմելու, խմբագրելու և նույնիսկ տպագրելու հետ կապված դրեթե բոլոր աշխատանքները ծանրանում են Հայկունու վրա։ Նա իր առօրյա զբաղմունքներից հետո գիշերներ է լուսացնում, որպեսզի «բանասերների առաջ ամոթով չմնա»[14]։ Եվ «անխոնջ ծերունու» ջանքերը բարձր գնահատանքի են արժանանում անվանի հայագետ Ստ. Մալխասյանցի կողմից։

1902 թ. լույս է տեսնում էմինյան ազգագրական ժողովածուի չորրորդ հատորը՝ շուրջ 50 բարբառներով գրի առնված հեքիաթների և դյուցազնավեպի Արարատյան ու Շատախի նորահայտ պատումներով, որոնց բարբառագիտական արժեքը բարձր է գնահատում մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը։

1904 թ. հրատարակված հինգերորդ հատորն ընդգրկում էր հայ-քրդական վիպերգերի շարքը, որը Հայկունին հավաքել էր հատուկ խնամքով ու եղբայրական ժողովրդի նկատմամբ ունեցած խոր համակրանքով՝ մեղեդիների վերծանումները վստահելով մեծն Կոմիտասին։

1905 թ. ցարական ոստիկանությունը խուզարկում է Հայկունու բնակարանը։ Հայտնաբերված «վտանգավոր փաստաթղթերը» առիթ են դառնում նրա՝ հնչակյան Հայրիկի իննամսյա բանտարկության։ Այդ ընթացքում ազատատենչ գաղափարներով օժտված նրա 20-ամյա դուստր Արուսյակը շարունակում է հոր գործունեությունը։ Նա կանանց կազմակերպություններ է ստեղծում Էջմիածնում, Թալինում, Եղվարդում, Ղրմղլուում, Մաստարայում և այլուր, սոցիալ-դեմոկրատական գաղտնի գրականություն տարածելով այդ վայրերում։ Էջմիածնի վանքը, որը մինչ այդ փոքր-ինչ նպաստում էր Հայկունուն, այլևս որպես «քաղաքական անբարեհույսի» ազատում է նրան «Արարատի» սրբագրիչի պաշտոնից՝ զրկելով նույնիսկ չնչին վարձատրությունից։

Աշխատանքից ու ապրուստի տարրական պայմաններից զրկված ծերունին դարձյալ շարունակում է իր մխիթարանքը գտնել ժողովրդի մեջ։ Արուսյակը ուղեկցում է հորը, սիրով ու նվիրվածությամբ մտնում գյուղական խրճիթները, գրի առնում վիճակի ու սիրո բազմաթիվ քառյակներ, հարսանիքի, լալիքի երգեր ու հավատալիքներ։ Սակայն ամուսնական ապերջանիկ կյանքը, հոգեկան խորը դրաման և իր սիրելի հորը նյութապես օգնելու անկարողությունն Արուսյակին հասցնում են այն բանին, որ իր գոյությունն ավելորդ բեռ համարելով 1905 թ. նա ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին։

Յոթանասնամյա ծերունու նյութական կարիքին ավելանում է նաև հոգեկան տառապանքը։ Սակայն բնությունից տոկուն, ուժեղ կամքի տեր Հայկունին վշտի մեջ անգամ չի վհատվում և ստեղծագործ աշխատանքի մեջ է գտնում իր սփոփանքը։ Նա Արուսյակի հավաքած նյութերն ուղարկում է Մոսկվա, Գր. Խալաթյանցին, որոնք տեղ են գտնում էմինյան ազգագրական ժողովածուի վեցերորդ հատորում (1906 թ.), իսկ Հայկունու գրառած ժողովրդական առակների մի մասը լույս է տեսնում 1907 թ. «Կենդանական վեպ» խորագրով, որը նվիրված էր «Արուսյակ դստեր անմոռանալի հիշատակին»։ Ի դեպ Ս. Հայկունու գրի առած ժողովրդական առակները դարձել են Հովհ. Թումանյանի գեղարվեստական մշակման առաղձը։ Անխոնջ բանասերը միաժամանակ շարունակում է իր ժողովրդագրական բազմաբնույթ գրառումներից քաղված շուրջ տաս հազար բառիմաստի մեկնաբանման աշխատանքը։ Այդ ծավալուն «Բառարանը»[15], մինչ այդ չլուսաբանված բառիմաստների մանրակրկիտ բացատրությամբ նշանակալից երևույթ էր ոչ միայն հայ բանագիտության, ազգագրության, տեղագրության ու արհեստագործության ասպարեզների համար, այլև այնպիսի բնագավառների, ինչպիսիք են բուսաբանությունն ու կենդանաբանությունը։ Ս. Հայկունու այդ «Բառարանը» ժողովրդական կյանքի մի հանրագիտարան է, որը, ինչպես Լազարյան

14 Տե՛ս Արարատ, Վաղարշապատ, 1902, էջ 75։

15 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. N 1։

ճեմարանի հատուկ մրցանակին արժանացած «Ժամանակակից հայերի սովորության իրավունքը»[16] բացառիկ հետաքրքրություն ներկայացնող արժեքավոր աշխատությունն ու մի շարք այլ գրվածքներ, մինչև օրս մնացել է անտիպ։

Դստեր մահից հետո անխնամ մնացած Հայկունին, վշտից ու նյութական կարիքից հարկադրված, դիմում է կաթողիկոսին։ «Սակայն վանքեն պետք եղած խնամքը չեմ ստացած,— գրում է դառնացած ծերունին,— ձրմռան ցրտեն պատսպարվելու որևէ միջոց չունենալով սարսափելի տանջանքների մատնված եմ»։ Նման ծանր պայմաններում 1908 թ. նա հեռանում է կյանքից, իրեն ընդմիշտ անմահացնելով իր գրառած ժողովրդական նյութերով։

Ս. Հայկունին, որպես իր ժամանակի առաջավոր մտածող, հասարակական-քաղաքական տեսանկյունից է դիտել հայ ժողովրդի հոգևոր հարստությունը։ Ժողովրդագրական նյութը նա գրի է առել ամենայն բարեխղճությամբ՝ առանձին խնամքով պահպանելով ժողովրդական խոսքի անաղարտությունը։ Վաստակաշատ բանահավաքն իր երկարամյա գործունեության ընթացքում մշակել է գրառման ու հրատարակման ուրույն սկզբունքներ, որոնք իրենց արժեքավորությամբ ուսանելի են նաև մեր օրերում։ Թեպետ Ս. Հայկունու գրի առած «Սասնա ծռեր» հերոսավեպի ինքնատիպ տարբերակներն ու հեքիաթներն իրենց արժանի տեղն են գտել մեր օրերում լույս տեսնող գիտական հրատարակություններում, սակայն ժամանակն է, որ մեծ երախտավորի թողած ժողովրդագրական ժառանգությունն ամբողջական ձևով լույս ընծայվի և դառնա ընթերցող լայն հասարակայնության սեփականությունը։

ЖИЗНЬ И НАРОДОВЕДЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ САРКИСА АЙКУНИ

В. Г. СВАЗЛЯН

Резюме

В истории армянской фольклористики почетное и заслуженное место принадлежит неустанному этнографу, собирателю фольклора Саркису Айкуни (1838—1908). Начало его деятельности совпало с периодом национально-освободительного движения западных армян 60-х годов XIX века.

Он развернул активную педагогическую деятельность в своем родном городе Трапезунде, в Ване, Ардвине, Алашкерте, затем, перейдя в Восточную Армению, в Эчмиадзине.

Будучи выходцем из народа, он ощущал необходимость систематического сбора и записи исчезающего фольклора, актуальность исследования веками складывавшегося быта народа и его духовного творчества.

С. Айкуни старался охватить все жанры устного народного творчества. Фольклорные материалы, собранные им, представляют более сорока диалектов армянского языка, включая и курдские эпические песни.

За время своей многолетней фольклористической деятельности С. Айкуни всегда сохранял подлинность и безупречность народной речи.

Велики заслуги С. Айкуни, замечательного этнографа и общественного деятеля; его деятельность—неотъемлемое звено истории армянского народоведения.

16 Հայաստանի պատմության պետական թանգարան, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. № 1։